

Պաղեստինցիներ երկ կրեկոյեան իսրայելեան բանակի մէկ անցարգելի վրայ սպաննեցին առնուապս վեց իսրայելացիներ: Իսրայելեան ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ Այսրորդանանի Այն Արիք շրջանին մէջ պաղեստինցիներ կրակ բացած են բանակի մէկ անցարգելի վրայ շարք բռնած իսրայելացիներու՝ սպաննելով վեց հոգի եւ վիրաւորելով ուրիշ մը: Այս դէպքին առաջ պաղեստինցի մը փորձած էր ինքզինք պայթեցնել պատի մը մէջ, սակայն վարորդը կայն դուրս հրած էր. պաղեստինցիին մարմինն կապուած պայթուցիկ նիւթը պայթած էր՝ սպաննելով կայն:

(ՌՈՅԹՈՐԶ)

ՊՈՒՇ ԿԸ ՓԱՓԱՔԻ ԳՈՐԾԱԿՅԻԼ ԼԻՔԱՆԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ստացաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշին շնորհաւորական հեռագիր մը, Ատհայի տօնին առիթով:

Պուշ իր հեռագիրին մէջ կ'ըսէ, որ կը փափաքի գործակցել Լիբանանի հետ վերակենդանացնելու համար լուրջ բանակցութիւններ՝ Միջին Արեւելքի մէջ ընդհանուր խաղաղութեան հետանդարձ:

Պուշ շնորհակալութիւն կը յայտնէ Լահուտի, որ ընդունած է ամերիկեան Բոնկրէսի պատերազմութիւնը. պատերազմութիւնը Պուշի ներկայացուցած է ՊէՋՐ-ը մէջ իր ունեցած հանդիպումներուն միջոցով:

Պուշ նաեւ կը հաստատէ երկու երկիրներուն միջեւ երկխօսութեան կարեւորութիւնը:

Միացեալ Նահանգներու նախագահը իր հեռագիրին մէջ նաեւ կը հաստատէ, որ երկու երկիրները հետաքրքրուած են միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարով:



Վարչապետ Հարիրի այցելեց զօր. Լահուտի:

Միջին Արեւելքի մէջ վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ ներկայացուց Սէնտական Արաբիա եւ Ֆրանսա տուած իր այցելութիւններուն եւ պետական պաշտօնատարներուն հետ իր ունեցած հանդիպումներուն արդիւնքները:

ՀԱՐԻՐԻ

Նախագահ Լահուտ երէկ առաւօտ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ ներկայացուց Սէնտական Արաբիա եւ Ֆրանսա տուած իր այցելութիւններուն եւ պետական պաշտօնատարներուն հետ իր ունեցած հանդիպումներուն արդիւնքները:

Հարիրի յայտնեց, որ հանդիպումին ընթացքին

քննարկուած են շրջանային գարգացումները, ՊէՋՐ-ի մէջ Մարտին գումարուելիք արաբական վեճաժողովին գծով կեցուածքները, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի իրավիճակին ու արաբ-իսրայելեան տագնապին առնչութեամբ եւրոպական Միութեան վերջերս յայտարարուած կեցուածքը:

Ինչ կը վերաբերի ներքին հարցերուն, ապա Հարիրի բաւ, որ նախագահին հետ քննարկած է

Շարք՝ Էջ 2

ՏԱՍՆԸԻՆԳ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ ԶՈՐ ԳԱՅԻՆ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՎԱՅՐԱԳ ՈՍԲԱԿՈԾՈՒՄՆԵՐՈՒՆ

Պաղեստինեան շրջաններուն դէմ իսրայելեան օդանւաւորութիւնը յարձակում մը 15 րոպէս իւրեք երէկ Կապալի ու Այսրորդանանի մէջ: Գիշերային ուժերու յարձակումին յաջորդեց Կապալի մէջ Համասի մէկ գրասենեակին ուժերու յարձակումը: Գրասենեակին ուժերու յարձակումին հետ 11ի բարձրացած էր արդէն Կոնտրոլի թիւը՝ վրիժառուութեան կոչեր հրահրելով պաղեստինեան շրջաններուն մէջ:

Համասի քաղաքական թելի ղեկավարներէն Մահմուտ Չահար ըսաւ, որ անմեղ քաղաքացիներու ու մանուկներու սպանութիւնը չի կրնար անպատասխան մնալ: Չահար աւելցուց, որ նոր ուժեր պիտի չկատարեն Համասի պայքարը թշնամիին դէմ, որ կը շարունակէ գրաւուած պահել պաղեստինեան շրջանները:

Իսրայելեան ուժեր



Համասի գրասենեակը՝ քարուքանդ:

կոծումը կը պատասխանէր պաղեստինեան յարձակումներուն, որոնք չորս իսրայելացիներ սպաննած էին անցեալ շաբթուան ընթացքին: Փոխադարձ յարձակումները կը հարուածեն ամերիկեան ու եւրոպական խաղաղա-

րար ճիգերը, ինչպէս նաեւ թափ կու տան Իսրայելի վարչապետ Արիէլ Շարոնի վրայ ճնշումներ, որ կը բանեցուն իսրայելեան աջակողմեան ու ձախակողմեան թելերուն տկարացնել նաեւ նախագահ Եասեր Արաֆատի դիրքը, յատկա-

րայելացիներու դէմ յարձակումներով, որոնք մեծ թիւով կոտորել կը խլեն: Պաղեստինեան իւրաքանչիւր գործողութիւնը կը տկարացնէ նաեւ նախագահ Եասեր Արաֆատի դիրքը, յատկա-

Շարք՝ Էջ 10

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ



Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Միխիթարեան եւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէան երէկ երեկոյեան այցելեցին վարչապետ Ռաֆիք Հարիրիին:

Հանդիպումին քննարկուի առարկայ դարձան Միջին Արեւելքի վերջին պարագումները, ներքաղաքական եւ տնտեսական իրավիճակը, ինչպէս նաեւ լիբանանահայ համայնքին իրաւունքներուն առնչուած հարցեր:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՍՐՈՒՄԷՆ ՅՈՒՇԱԳԻՐ՝ ՊԸՐՐԻԻ

Լիբանանեան կուսակցութիւններու եւ պաղեստինեան ուժերու պատուիրակութիւնը երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիին: Պատուիրակութեան մաս կը կազմէր Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ պատուիրակութիւն մը, գլխավորութեամբ Յովիկ Միխիթարեանի:

Պատուիրակութիւնը Պըրրիի յանձնեց յուշագիր մը, որուն մէջ համախմբուած խորհրդարանի նախագահին կը խնդրէ զօրավիզ կանգնել ինքիֆտաւային եւ հարաւի դիմադրութեան թիկունք կանգնելու իր կեցուածքին:

Համախմբուած նաեւ Պըրրիին խնդրեց խորհրդարաններու արարական եւ միջազգային ընկերակցութիւններուն մէջ աշխատանք տանել՝ ինքիֆտաւային եւ հարաւի դիմադրութեան զօրակցութիւն ապահովելու համար:

Խորհրդարանի նախագահը նշեց, որ Մարտին ներկայ պիտի ըլլայ խորհրդարաններու միջազգային ընկերակցութեան Մարտի մէջ կայանալիք ժողովին եւ շփումներ պիտի կատարէ այս գծով:

ԱՆԳԱՐԱ ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼԷ «ՔԱՅԻՏԱ» ՑԱՆՅԻՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՔ ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ

Թուրքիոյ մէջ ապահովութեան ուժեր ձերբակալած են Ուսամա պըն Լատիֆի «Քայիտա» ցանցին հետ կապեր ունեցող երեք կասկածելիներ, որոնք ենթադրաբար Իսրայելի մէջ անձնասպանական գործողութիւն մը կը ծրագրէին:

Թուրքիոյ ոստիկանութեան բանբեր Յեյուլլա Արալան մամուլայտուլիսի մը ընթացքին, յայտնած է, թէ կասկածելիները 2001ին Իրան մտած են եւ անոնց հրա-

հանգուած է Իսրայելի մէջ անձնասպանական գործողութիւններու ձեռնարկել:

Ան ըսած է, թէ կասկածելիները վերջերս Աֆղանիստանի մէջ թալեպան վարչակարգին կողմէ գիտատնտեսական իրաւունքներու մէջ գտնուած են, զինուորական մարտիմներուն ներկայ եղած են պատերազմի օրերուն թալեպան շարքերը մտած:

Արալան յայտնած է, որ ամերիկացի պաշտօնատարներ գաղտ-

նի տեղեկութիւններ հայթայթած են կասկածելիներու ձերբակալութեան օժանդակելու համար:

Ոստիկանութեան համաձայն անոնք կը պատկանին միջին արեւելեան խմբակի մը, որ «Իմամներու Միութիւն» կը կոչուի: Անոնք յորդանանցի, պաղեստինցի եւ իրաքցի քաղաքացիներ են:

Կասկածելիները ձերբակալուած են Ուրբաթ օր արեւելեան Թուրքիոյ մէջ՝ իրանեան սահմանին մօտ: Ոստիկանութիւնը գտած է, թէ անոնք կեղծ անձնաթուղթեր, անցագրեր եւ ռումբերու պատրաստութեան համար արաբերէն գրութիւններ կը կրէին:

ԱՅԳԱՆ ՆՈՐ ԲԱՆԱԿԻ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԻՆ



Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիին:

Հանդիպումին քննարկուի առարկայ դարձան Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեանի Լիբանան կատարելիք պաշտօնական այցելութեան կապուած հարցեր: Այցելութիւնը պիտի կատարուի Պըրրիի հրաւերով:

Շարք՝ Էջ 2

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Ռուսիոյ վերաբնիչ պալատի նախագահ Սերգէյ Սիլեւանովի գլխավորած պատուիրակութիւնը:

Հանդիպումին ընթացքին նախագահ Քոչարեան ողջունեց Հայաստանի Ազգային Ժողովի վերահսկելի եւ Ռուսիոյ վերաբնիչ պալատներու գործակցութիւնը:

Շարք՝ Էջ 10

Ս. ՍԱՐԳՍԵԱՆ ԿԻՊՐՈՍ Կ'ԱՅՅԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆ - ԿԻՊՐՈՍ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիպրական «Սայփրոս Նիու Էյճընսի» լրատու գործակալութիւնը յայտնեց, որ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան պաշտօնական հնգօրեայ այցելութեան մը համար այսօր պիտի մեկնի Կիպրոս, ընդառաջելով իր պաշտօնակից Սոկրատէս Հասիկոսի հրաւերին: Նախարար Սարգսեանի գլխավորած պատուիրակութեան մաս կը կազմեն պաշտպանութեան փոխ նախարար Եուրի Խաչատրուրի, Վօր. Միքայիլ Մելքոնեան, Ազգային Ժողովի պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ Վահան Յովհաննիսեան եւ զինուորական պաշտօնատարներ:

Այցելութեան ընթացքին նախարար Սարգսեան հանդիպումներ պիտի ունենայ Կիպրոսի նախագահին, խորհրդարանի նախագահին եւ կարգ մը նախարարներու հետ: Սարգսեան նաեւ պիտի ստորագրէ համաձայնագիր մը իր պաշտօնակից Սոկրատէս Հասիկոսի հետ:

ԵԱՀԿԻ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՈՎԿԱՍ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկաղի Ղուկասեան Ստեփանակերտի մէջ ընդունած է ԵԱՀԿի նախագահի յատուկ պատուիրակ Անճէյ Քասպրիշի: Հանդիպումին ընթացքին կողմերը քննարկեցին ԵԱՀԿի գործող նախագահ, Փորթուգալի արտաքին գործոց նախարար Նաթալի Կամալի շրջան այցելութիւնը, որ տեղի պիտի ունենայ Մարտի սկիզբին:

Քասպրիշի Ղուկասեանի ներկայացուցչական առաջարկը՝ Երեւանի մէջ հանդիպում մը ունենալու առնչութեամբ: Ղուկասեան - կամա հանդիպումը տեղի պիտի ունենայ Մարտ 5ին:

Կողմերը նաեւ անդրադարձան ԵԱՀԿի ներկայացուցիչներու կողմէ Լեռնային Ղարաբաղի եւ Ազրբայճանի միջեւ սահմանի վերահսկողութեան աշխատանքներուն: Անճէյ Քասպրիշի գլխավորութեամբ վերջին վերահսկողութիւնը կատարուած էր Փետրուար 14ին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՍՏԱՆՁՆԵ ՍԱՅՏԱՅԻ ԵՒ ԹՐԻՓՈԼԻԻ ԴԱՇՏԵՐԸ

Երիտասարդուկության եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ յայտարարեց, որ նախարարութիւնը յառաջիկայ շաբաթակիցին պիտի ստանան Սայտայի եւ Թրիփոլիի միջազգային մարզադաշտերը, եւ վերաշինութեան ու բարգաւաճման խորհուրդի նախագահին հետ համաձայնութիւն գոյացած է դաշտերու յանձնումը կատարելու Երկուշաբթի կամ Երեքշաբթի օրը:

Նախարար Յովնանեան երէկ գլխավորեց ժողով մը, որուն ներկայ գտնուեցաւ նախարարութեան ընդհանուր տնօրէն Ալիա Սիմոնի: Քննարկուեցաւ դաշտերու ստանձնումին ետք կատարելիք աշխատանքը, ինչպէս նաեւ այսօր՝ Չորեքշաբթի, ստորագրուելիք լիբանանեւուրիական համաձայնագիրին կապուած հարցերը:

Նախարար Յովնանեան երէկ նաեւ ընդունեց Լիբանանի սկաւտական շարժումի պատուիրակութիւնը, որ ներկայացուց արաբեւերոպական սկաւտական հանդիպումի նախապատրաստութիւնները:

ԱՆԳԱՐԱ ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼԷ...

Շարունակուած Ա. Էջնց
պոլի հասած է Երկուշաբթի օրը:
Քէմփպոլ տեսակցութիւններ ունեցած է փոխանցման ղեկավար Համիտ Քարպայի եւ պաշտպանութեան նախարար Մոհամէտ Յահիմի հետ:

Չորավար Չահիր Աղպար ըսած է, թէ բանակցութիւնները քանի մը օր պիտի շարունակուին, ապա աւելի յստակ պիտի դառնայ թէ ամերիկացիք ի՞նչ իտտակի օժանդակութիւն պիտի հայթայթեն Աֆղանիստանի:

Աղպար յայտնած է նաեւ, որ Քէմփպոլի հետ տեսակցութեան ընթացքին, փոխանցման վարչակարգը չօրակցութիւն արտայայտած է Աֆղանիստանի մէջ ամերիկեան պինտորական արշախի շարունակման գաղափարին:

Մինչ այդ, կառավարութիւնը երէկ սկսած է քննութիւնները պատշարութեան եւ օդային փոխադրութեան նախարար Ապտիլ Ռահիմանի սպանութեան շուրջ:

Քարպայ յայտնած է, թէ անցեալ Հինգշաբթի օր Քարպայի օդակայանին մէջ տեղի ունեցած սպանութեան զորակազմաւոր կը թուի անձնական վրէժխնդրութիւն ուլլալ եւ քաղաքական արմատներ չունենալ:

Աշխատատեղիներու եւ ընկերային հարցերու նախարար Միր Ուայս Սատէք յայտնած է, թէ սպանութեան կապակցութեամբ 3 կասկածելիներ կը հարցաքննուին Քարպայի մէջ: Իսկ կը սպասուի 3 այլ կասկածելիներու Ս. Արաբիոյ կողմէ արտայանձնումը:

ԻՐԱՆ ԿԻՔԱՍԹԱՐԸ ՊԻՏԻ ԱՐՏԱՔՄԵ

Իրան որոշած է արտաքսել աֆղան այլախոհ պիւնտիստները Կուլպուտիստին Հիքմատիարը, որովհետեւ ան ազգային ապահովութեան դէմ

Շար.ը՝ էջ 10

«ԱՉԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●Տիր ժամ Ֆարաճեան 500 տոլար

ՀԱԼԵՊ ՀԱԼԵՊ

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Լուսին Պարմազուրեան եւ զուգուրեան
- Տէր եւ տիկին Գէորգ Պարմազուրեան
- Տիար Մովսէս Պարմազուրեան
- Օր. Պերճունի Պարմազուրեան
- Տէր եւ տիկին Առաքել Թերզեան
- Տէր եւ տիկին Արա Թերզեան
- Տէր եւ տիկին Վահէ Թերզեան
- Տէր եւ տիկին Գրիգոր Նալպանտեան
- Տէր եւ տիկին Յարութիւն Պարմազուրեան
- Տէր եւ տիկին Արթուր Պարսումեան
- Տէր եւ տիկին Ռուբէն Պարսումեան
- Պարմազուրեան ընտանիք
- Թերզեան ընտանիք
- Նալպանտեան ընտանիք
- Սարգիսեան ընտանիք
- Պարսումեան ընտանիք
- Մանուկեան ընտանիք
- Միսեան ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գումարներ իրենց ամուսնոյն, հօր, փեսային եւ հարազատին՝

ԳՐԻԳՈՐ ՊԱՐՄԱԳՍԸԶԵԱՆԻ
(Ծնեալ՝ 1946ին, Հալէպ)

Մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 19 Փետրուար 2002, առաւօտուն, Գամիշլիի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 20 Փետրուար 2002, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Սեյրաֆի:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին եկեղեցւոյ արահէն ներս:

ՇԱՐԻՐԻ ԻՏԱԼԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՇԵՏ ՊԻՏԻ ԲՆԱՐԿԵ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐԸ ՇԵՏԱՔՐԵՐՈՂ ՇԱՐՅԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի այսօր՝ Չորեքշաբթի, երկօրեայ պաշտօնական այցելութեան մը համար կը մեկնի Իտալիա: Վարչապետին կ'ընկերակցին արտաքին գործոց, ճարտարարւեստի եւ տնտեսութեան նախարարներ Մահմուտ Համմուտ, Ժորժ Աֆրամ եւ Պասէլ Ֆէյխան:

Այցելութեան ընթացքին պիտի քննարկուին Միջին Արեւելքի վիճակը, այս գծով շարժումները, եւ երկու երկիրներու քաղաքական եւ տնտեսական կապերը:

Այսօր երեկոյեան Հարիրի պիտի այցելէ Իտալիոյ նախագահ Քարլո Չամպիի, ապա պատուոյ հիւրը պիտի ըլլայ Իտալիոյ գործարարներու կազմակերպած ընթերցան:

Հինգշաբթի օր, Իտալիոյ խորհրդարանի եւ ծերակոյտի նախագահներին ետք Հարիրի պիտի տեսակցի Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնիին հետ, որ ճաշկերպութեամբ պիտի տայ ի պատիւ լիբանանեան պատերազմութեան: Երեկոյեան, Հարիրի հանդիպումը մը պիտի ունենայ ճարտարարուեստի գիտնականացումը: Հարիրի երէկ նաեւ ընդունեց տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի եւ երեսփոխաններ Մահմուտ Սալլուլը, Մահմուտ Ալի Մէյսը եւ Ֆայսալ Տաւուտը:

ՇԱՐԻՐԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Հարիրի երէկ ընդունեց ներքին գործոց նախարար էլիաս Մըրըր եւ ճարտարարուեստի նախարար Ժորժ Աֆրամը, որոնց հետ

քննարկեց նախարարութեան վերաբերեալ հարցեր:

Հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրտահի եւ ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մահմուտ Ապտէլ Համիտ Պայաուն եւս այցելեցին Հարիրիին: Հաղորդուեցաւ, որ քննարկուած է այս բնագաւառներու ապագայեականացումը:

Հարիրի երէկ նաեւ ընդունեց տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի եւ երեսփոխաններ Մահմուտ Սալլուլը, Մահմուտ Ալի Մէյսը եւ Ֆայսալ Տաւուտը:

ԱՏՏԱՅԻ ԱՐՁԱԿՈՒՐՂ

ՎԱՐՁԱՊԵՏԻ գրասենեակը հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ Ատհայի առիթով վարչապետը շնորհաւորական հեռագիրներ յղած է արար ղեկավարներուն: Նկատի առնելով շրջանային իրավիճակն ու յատկապէս իսրայէլեան բռնագրաւումին կողմէ պահեստիցներուն դէմ գործուած բռնարարները, վարչապետ Հարիրի ներողութիւն կը խնդրէ, որ շնորհաւորական այցելութիւններ պիտի չընդունին:

28 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼ

Աշխատատեղիներու սենտիքաներու ազգային համախմբումը երէկ կոչ ուղղեց Հինգշաբթի, 28 Փետրուարը դարձնելու պատմական օր, գործադուլի եւ ցոյցերու ճամբով բողոքելու կառավարութեան նրդեգրած փոխառութիւններ կատարելու, նոր տուրքեր պարտադրելու, աշխատատեղիներ գործէ արձակելու եւ պետական հաստատութիւններու սեփականացումը շնորհաւորելու:

ԿՈՒՉՈՒԻՆ

●Վարչապետ Ռաֆիք Հարիրի (ձիւղծի), ոսկերիներ (սեւեղեր) գործարարներ եւ քարտուղարուհի մը. հեռ. 01-242549:

ՏԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ (ԽՆՈՒՅՈՎ ԿԱՍ ՏԱՍԱՆՈՎ)

●Ոսկերչատան յարմար պատրաստ տեքստիլ, կամ առեւտրական ազատ գործառնութեան յարմարութեամբ, Պուրճ Կամուտ, «Արմենիա» պողոտայ, հեռ. 03-273525:

STUDIO Lantern

●Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Հեռ. 01-266866
Եւ 03-695399

ՇԱԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ Ս. ԱՏՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԵՋ

Առ ի գիտութիւն մեր հաւատացեալներուն, Ուրբաթ, 22 Փետրուար 2002ի երեկոյեան ժամը 6:30ին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հսկումի արարողութիւն տեղի պիտի ունենայ, մասնակցութեամբ դպրեւանքի սաներուն:

Այս առթիւ պիտի քարոզէ դպրեւանքի տեսուչ ԳԵՐ. Տ. ՇԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան եւ լսելու հայր սուրբին պատգամը:

ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ Ս. ԱՏՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹՐԱՏԻ ՇԱՅ ԱԲԵՏ. ՎԱՐՃԱՐԱՆ ԲԱՅՈՒՄ

ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՒ ԱՅԼ ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄՆԵՐ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Հովանաւորութեամբ՝
ՎԵՐ. ՍԿՐՏԻՉ ԳԱՐԱԿԵՕՂԵԱՆԻ
(Ս. Ա. Շ. Ա. Ե. Սիւրբեան ճախագահ)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Փետրուար 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին:
●Շանդիպումի աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն:

ՇՐԱԵՐ

ՊՈՒՇԵՆ ՀԵՌԱԳԻՐ՝ ՊԸՐՐԻԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ ստացաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշէն Ատհայի տօնին առիթով շնորհաւորական հեռագիր մը, որուն մէջ ան յոյս կը յայտնէ, որ ճիգերը կը կրկնապատկուին արմատախիլ ընելու համար միջազգային ահաբեկչութիւնը, որ փորձանք մըն է:

Պուշէն իր հեռագիրին մէջ շնորհաւորութիւններու եւ բարեմաղթութիւններու կողքին կը վերահաստատէ իր յանձնառուութիւնը՝ շարունակելու այդ պայքարը, «ապահովութիւնը՝ շարունակելու շնորհակալութեամբ ժողովուրդներուն եւ Միջին Արեւելքի մէջ հաստատելու արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութիւն»:

Պըրրի, իր կարգին, երէկ հաղորդագրութեամբ մը Ատհայի տօնին առիթով շնորհաւորական խօսք ուղղեց բոլոր իսլամներուն, արաբներուն եւ լիբանանցիներուն, մաղթելով, որ անիկա բարեբեր ըլլայ բոլորին, եւ յայտնելով, որ Լիբանանի եւ շրջանային պայմաններուն բերմամբ պիտի չընդունին շնորհաւորական այցելութիւններ:

ՊՈՒՇ ԿԸ ՓՎՓՎՔԻ ...

Շարունակուած Ա. Էջնց

տիրող տնտեսական պայմանները, ինչպէս նաեւ անհրաժեշտութիւնը՝ խորհրդարանին հետ գործակցաբար յառաջ տանելու ապագայեականացումին եւ կառավարութեան սկսած վարչական եւ դրամական բարեկարգումներուն վերաբերեալ օրինագիծները:

Հարիրի նաեւ յայտնեց, որ Ատհայի արձակուրդին ետք նախագահ Լահուտի հետ հանդիպումներ պիտի ունենայ շարունակելու համար հրատապ հարցերու քննարկումը:

ԱՅՅԵԼՈՒՆԵՐ

Երեսփոխաններ Քապալան Իսա Խուրի եւ Նատէր Սըքթար նախագահ Լահուտի հետ իրենց հանդիպումներուն ընթացքին արձարծեցին իրենց շրջաններուն վերաբերեալ հարցերը, ինչպէս նաեւ քաղաքական, տնտեսական եւ ընկերային խնդիրներ:

Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ նախագահ Լահուտի ներկայացուց զրամ «լուտ» դէմ պայքարի ցարդ արձանագրած յառաջիմութիւնը: Նաեւ խօսուեցաւ երկրի դրամական կայունութեան մասին:

Պատուիրակութիւն մը «Լիբանանի մէջ պանդոկներու պատուութիւն» գիրքը ներկայացուց նախագահին, որ նաեւ ընդունեց Հատասի քաղաքապետական խորհուրդն ու զերասան էլի Մնայֆէրը:

«Ո՛վ երկիր... Տիրոջը խօսքին մտիկ ըրէ՛»
(Երեւ. 22.29)

ԵՐԱԾՇՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՋՉԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

կը ներկայացնէ՝ Հայրենիքէն ժամանած

Բարեշնորհ Աշոպ Սրկ. Մարտիրոսեան

Թուական	Ժամ	«Հայ Առաքելական Եկեղեցւոյ Եղբայրակցութիւն»	Վայր	
Կիր.	17/2/02	երկ. 6:00	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Թ Բաւուտա
Հինգշ.	21/2/02	կ.ա. 10:30	(Քոյրերու մասնաճիւղ)	Թ Գէյք Էլ-Գօգօ
		երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Բաւուտա
Ուրբ.	22/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Բաւուտա
Շբ.	23/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Բաւուտա
Կիր.	24/2/02	երկ. 6:00	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Բաւուտա
		կ.ա. 9:30	(Քոյրերու մասնաճիւղ)	* Ամանս
Երկշ.	25/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Բաւուտա
Երեքշ.	26/2/02	երկ. 7:30	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	Բաւուտա
Չորեք.	27/2/02	կ.ա. 10:00	(Քոյրերու մասնաճիւղ) Միջինք	Բաւուտա
		երկ. 8:00	«Հայ Առաքելական Եկեղ. Եղբ.»	* Ֆանար
Հինգշ.	28/2/02	կ.ա. 10:30	(Քոյրերու մասնաճիւղ)	Գէյք Էլ-Գօգօ

© «Էլիմ»-ի ԸԵԿԵՐԱԿԻՄ Կեդրոնի հանդիսարանի մէջ:
 * «Գէյք Էլ-Գօգօյի» (سيدة العجا) եկեղեցւոյ մէջ:
 * «Ֆանար»-ի մատրան մէջ:
 * «Ամանոս», (المناس) դպրոցից կից:
 - Յուրեմի մամրամասնութեանց համար հեռագրային - 01/251066 - 03/885123

ՀՐԱԻԸՐ

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝
ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՇ ՅՈՎԱՆԵԱՆԻ
(Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան ճախարար)

Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Ը. Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 24 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 5:00ին, ԵՈՒՆԵՍԵՕԻ պալատին մէջ, Պէյրութ:

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՐԸ ԻՏԱԼԻԱ Կ'ԱՅՑՑԵԼԷ

ՀՌՈՍ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Սուրիոյ նախագահ Պաշտպան Ասատ Իտալիա ժամանեց Երեքշաբթի օր պաշտօնական այցելութեան մը համար, որուն ընթացքին պիտի փորձէ Սուրիան ներկայացնել, իբրեւ չափաորոշեալ տիպար երկիր մը, որ յաջողած է պայքարիլ ահաբեկչութեան դէմ:

Ասատի կ'ընկերանայ բարձրաստիճան պատերազմութիւն մը, որուն մաս կը կազմեն աւելի քան հարիւր խորհրդատուներ, նախարարներ եւ գործարարներ: Եոթեայ այցելութեան ընթացքին, Ասատ տեսակցութիւններ պիտի ունենայ Իտալիոյ կառավարութեան անդամներու, երեսփոխաններու եւ գործարարներու հետ: Ան նաեւ Վատիկան պիտի այցելէ, հանդիպում ունենայլու համար Յովհաննէս Պօղոս Բ. պապին հետ: Այցելութեան ընթացքին կը նախատեսուի, որ Ասատ պուշացնէ ահաբեկչութեան դէմ պատերազմը ծաւալելու ծրագիրէն: Ան կոչ պիտի ուղղէ նաեւ չափաորոշեալ կեցածք որդեգրելու ծայրայեղականութեան դէմ: Դամասկոսէն մեկնումի պահուն, Ասատ ըսաւ, որ Սուրիա փորձառութիւնը ունեցած է այս

մարտին մէջ եւ յաջողած է պարտութեան մատնել ահաբեկչութիւնը, երբ չափաորոշեալ ընկերութիւն մը ունենալու ճիգերուն թափ տուած է: «Չափաորոշեալութիւնը թշնամին է ահաբեկչութեան», աւելցուց Ասատ:

Նախագահ ընտրութեան ի վեր (Յուլիս 2000), Ասատ չորրորդ անգամ ըլլալով կ'այցելէ Արեւմուտքի երկիրներէն մէկը: 11 Սեպտեմբերի դէպքերէն ետք, ան առաջին անգամ ըլլալով Արեւմուտք կ'այցելէ:

Խօսելով Իրաքի դէմ ամերիկեան հաւանական յարձակումի մը մասին, Ասատ քանի մը օր առաջ ըսած էր, որ նման գործողութիւն մը ծանր ու վտանգաւոր հետեւանք պիտի ունենայ, որովհետեւ անիկա պիտի պատճառէ ծողոկողային ցաւումի ալիք մը, որ շատ աւելի վտանգաւոր է քան քաղաքական հակադարձութիւնը:

Իտալացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ հանդիպումներուն ընթացքին, Ասատ պիտի արծարծէ նաեւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացն ու պաղտախնէան շրջաններուն իրավիճակը:

ՊՈՒՇ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՄՇԱԿԵԼ

ՍԷՆՈՒԼ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Մ. Նահանգներու նախագահ Ջորջ Պուշ Երեքշաբթի օր Ճափոնէն Հարաւային Քորէա հասած է, ինքզինքը Հիւսիսային Քորէայէն «հրետանիի հաստիքներէն» վրայ դնելով:

Ճափոնի մէջ ան խոստացած էր պաշտպանել Հարաւային Քորէան եւ Ասիոյ մէջ պինդութեան ներկայութիւն պահել: Մեկնելէ առաջ Ճափոնի խորհրդարանի մէջ իօսք տոնելով, ան խոստացած է նաեւ հրթրային

պաշտպանութեան դրուութիւն մը մշակել՝ շրջանին մէջ Ուաշինկթընի դաշնակիցները պաշտպանելու համար:

Առ ի պատրաստութիւն Պուշի Հար. Քորէա այցելութեան, հարիւրաւոր ոստիկաններ խիստ պատրաստ վիճակի մէջ դրուած են:

Ան տեսակցութիւն մը պիտի ունենայ նախագահ Քիմ Տէյ-Ճունկի հետ եւ քորէական թերակողմի երկուքի բաժնուղ Սպա-պիւնէյ Գօտիէն ան դին Հիւս. Քորէան

պիտի դիտէ: Սպիտակ Տան դեկավարը առաջին իր շրջապատը պիտի աւարտէ Չինաստան այցելութեան մը:

Պուշ եւ անոր վարչակարգը աւելի քան անոր նախորդը՝ Պիլ Քլինթըն, կեդրոնացած են Հիւսիսային Քորէայի հարաւին համար ներկայացնող սպառնալիքին վրայ:

Ամերիկացի պաշտօնատարներու համաձայն, Հար. Քորէայի մէջ, ուր արդէն անոր դէմ բողոքի ցուցեր տեղի ունեցած են, Պուշ դարձեալ պիտի շեշտէ, թէ պէտք չէ արտօնել «աշխարհի ամենէն վտանգաւոր վարչակարգերուն», որ «աշխարհի ամենէն վտանգաւոր պէնթերը» ձեռք ձգէ:

Հար. քորէացի պաշտօնատարներ յոյս յայտնած են, թէ Պուշի այցելութիւնը ձմարան պիտի հարթէ Հիւս. Քորէա - Մ. Նահանգներ բանակցութիւններուն, մեղմացնելու համար կասկածները՝ Փիոնկեանկի կորիպային եւ միջցամաքամասային հրթրային ծրագիրներուն եւ անոր աւանդական ուժերուն մասին:

ԱԿԱՆՈՒԱԾ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՊԱՅԹՈՒՄ՝ ՍՊԱՆԻՈՅ ՄԵՋ

ՊԻԼ ՊՍՕ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Սպանիոյ պաշտպանութեան մէջ շրջանին մէջ պատահեցաւ ինքնաշարժի պայթում մը՝ ծանրօրէն վիրատուրելով ընդդիմադիր Ընկերվար Կուսակցութեան պատասխանատուներէն մէկը:

Էտուարտո Մատինա, Ընկերվարական Կուսակցութեան ուսանողական թեի պատասխանատուն, պայթումէն ետք փոխադրուեցաւ հիւանդանոց, յայտնեց ոստիկանութիւնը:

Քաղաքական դէմքեր պայթումը ուղղակիօրէն առնչեցին պաշտպանութեան ԷԹՄ խմբակին:

27 ամեայ Մատինա, կորսնցուցած է մէկ արունքը եւ հաւանական է նաեւ, որ ան երկրորդը եւս կորսնցնէ:

«Կուսակցութեան երիտասարդական թեի մէջ մենք կ'իրագործենք միայն երիտասարդական քաղաքական շարժումներ եւ կատարելապէս խաղաղ է մեր աշխատանքը», ըսաւ Խոսէ Մարիա Կարսիա, ինքնակին քարտուղարը:

ՄԻԼՈՇԵՒԻՉ ԿԸ ՀԱՐՑԱՔՆՆԵ ԻՐ ԴԷՄ ՎԿԱՅՈՂ ՄԸ

ԼԱ ՀԷՅ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Եուկոսլաւիոյ նախկին նախագահ Սլոպոլան Միլոշեւիչ ուժեղ կերպով մարտահրաւէր ուղղած է Երեքշաբթի օր դատախաչութեան առաջին վկային՝ ծագումով ալպանացի քաղաքական անձնաւորութիւն Մահմուդ Պաքալիի:

Բ. Աշխարհամարտէն ի վեր Եւրոպայի պատերազմական ոճիւրներու մեծագոյն դատավարութեան վեցերորդ օրը, Միլոշեւիչ յարձակողական ոճով հարցաքննութեան ձեռնարկած է եւ մարտահրաւէր ուղղած սերպական արշաւի մը գծով Պաքալիի վեկուցումին: Դատախաչներու համաձայն, 1990ական թուականներուն Բոսնիոյ ալպանացի մեծամասնութեան դէմ «խտրականութեան» քաղաքականութեան մը ճամբան հարթած է 1999ի հարաւային Սերպիոյ Բոսնիոյ նահանգին մէջ Միլոշեւիչի ուժերուն կողմէ «համայնքային բնոյթի մաքրագործումներ»:

Պաքալի, որ Բոսնիոյ Համայնավար Կուսակցութեան նախկին բարձրաստիճան մէկ պաշտօնատարը եղած է եւ մասնակցած՝ 1998ի

բանակցութիւններուն, սերպական ուժերուն եւ ծագումով ալպանացի պինտայններու միջեւ բախումներուն վերջ տալու նպատակով, Միլոշեւիչը ամբաստանած է Եուկոսլաւիոյ համայնքային ներդաշնակութիւնը քանդած ըլլալու յանցանքով:

Երկու թշնամիները բախում ունեցած են Եուկոսլաւիոյ քաղաքականութեան գծով խորհրդաւոր մարտամասնութիւններու մասին, բոլորովին տարբեր վեկուցումներ ներկայացնելով Բոսնիոյի այն դէպքերուն առնչութեամբ, որոնք ի վերջոյ նահանգը տագնապի մէջ մարձած են:

Միլոշեւիչ, որ Պեկրատի համալսարանին մէջ պատարանութիւն ուսանած է եւ իր սեփական պաշտպանութիւնը տանձնած՝ իրաւական մարտի խորհրդականներու օժանդակութեամբ, մէկը միւսին ետեւէ տասնեակներով հարցումներ ուղղած է Պաքալիի:

Լա Հէյի ՄԱԿի ատենանի նախագահող դատարար Ռիչըրտ Մէյ որոշ անհամբերութիւն ցուցաբերած է երկու անձնաւորութիւններու միջեւ ծայր տուած վիճարանութեանց գծով:

ԱՌԱՅՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԽԱՐԱԶԻ ՅԵՏԱԶԳԵՑ ՌՈՒՍԻԱ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

ԹԵՀՐԱՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Նարազի յետաձգած է Ռուսիա իր այցելութիւնը, որ Երեքշաբթի օր (երէկ) պէտք է սկսէր:

Ըստ ԻՐՆԱ լրատու գործակալութեան, յետաձգումը «արտաքին գործոց նախարարին ժամանակացոյցին մէջ համակարգումի հարցերու» պատճառով է:

Անիկա նոր թուական մը չէ տուած այցելութեան համար: Սոսկուցանելով, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարուցին յայտարարած է, թէ Փետրուար 19 - 20ին՝ ծրագրուած այցելութիւնը յետաձգուած է՝ առանց պատճառներ տալու:

Մինչեւ երկուշաբթի օր, Նարազի հրապարակաւ կը խօսէր Ռուսիա նախատեսած իր այցելութեան մասին:

ՔԱՆԱՏԱ ԿԸ ՄԵՐԺԷ ԻՐԱՔԻ ԴԷՄ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ

Քանատա միացաւ շարքին այն երկիրներուն, որոնք կը մերժեն Իրաքի դէմ նոր պատերազմ մը: Քանատա, որ պօրաւոր ճնշումի կ'ենթարկուի Միացեալ Նահանգներուն կողմէ, պօրավիզ կանգնելու համար Իրաքի դէմ յարձակումի մը, յայտարարեց,

որ ճնշումի ենթարկուելով պօրավիզ պիտի չկանգնի որոշումներու, զորս սխալ կը նկատէ:

Օթավա կը նկատուի Ուաշինկթընի ամենէն մօտիկ դաշնակիցը, սակայն վերջերս պատերազմի է, որ Քանատայի կառավարութիւնը հանգիստ չէ Իրաքի հանդէպ Միացեալ Նահանգներու նախագահ Ջորջ Պուշի հետպիտէ խստացող կեցուածքին: Քանատացի նախարարներ սկսած են յայտարարութիւններ կատարել եւ ճառեր արտասանել Կատարի արտասանելի համար քանատացիները, թէ Օթավա անկախ որոշումներ կու տայ՝ սակայն պարտաւորութեամբ ճնշումներ կու տայ: Փոխ վարչապետ Ճոն Մանլի ըսաւ, որ

ԲՐԻՏԱՆԻԱ ԻՍԼԱՄ ԿՐՕՆԱԻՈՐ ՄԸ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԻ

Լոնտոնի հաստատուած իսլամ կրօնաւոր մը ձեռքբերուած է հակաահաբեկչական ոստիկանութեան կողմէ՝ ոչ իսլամներ ու հրեաներ սպաննելու կոչեր ուղղած ըլլալուն համար, յայտնեց ոստիկանութիւնը:

Ապտալլա Ֆայսալ ձեռքբերուած է Երկուշաբթի օր, Լոնտոնի իր բնակարանին մէջ, աւելցուցին ոստիկանութեան աղբիւրները: Անոնք յայտնեցին նաեւ, որ Ֆայսալ Բրիտանիոյ տարածքին իր հետեւորդներուն կը քարոզէր սպաննելի հրեաներ ու անհաւատները: Ֆայսալ ինք նախապէս քրիստոնէայ եղած է, որ ընդունած է իսլամութիւնը: Բրիտանիոյ խորհրդարանի անդամներ կառավարութեան պահանջած են սանձել կրօնաւորը՝ միջոցառումներ որդեգրելով անոր դէմ: Ֆայսալի «քարոզներ»-ուն Վիտօ Երիկները վաճառքի դրուած էին Բրիտանիոյ տարածքին գտնուող իսլամական գրախանութիւններու մէջ:

Յստակ չէ տակաւին, թէ ինչպիսի՞ ամբաստանութիւններ պիտի ուղղուին Ֆայսալի դէմ: (ՌՈՅԹԸՐԸ)

ԳՈՐԾԱԾԵՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը
Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւղին, ինչպէս նաեւ լուսալու համար, վճարումին հետ միաժամանակ ցերեկայացուցք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:



ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը
FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն:-
● ԱՅՏՀԻԼի գրասենեակ, Պուրճ Համուտ
● Համազգայինի գրախանութ, Պուրճ Համուտ
● Գրատուն Caravelle, Չալքա
● Գրատուն Sava, Այնճար
● Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
● Obelix հաստատութիւն, Անթիլիաս

- FUEL CARD ԿՐԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՆՏԵՔԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ**
1. CORAL JAL EL DIB, Ժէ Էլ Տիպ
 2. HYPCO ANTELAS, Հարաք Ալ Դաուարնէ
 3. SPEED ANTELAS, Կարողիկոսարանի դիմաց
 4. CORAL BAABDAT, Պապապտէ մայրուղի
 5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
 6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանցե առաջ
 7. MEDCO KARANTINA, Զարանցիմայի մայրուղի
 8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
 9. CORAL MAR MIKHAEL, Մար Միխայէլ, Սաատ պողոտայ
 10. SPEED ALITTIHAD, Կալէրի Իթթիհատ
 11. MANAR FANAR, Ֆանար, Նատրը պանդոկին կից
 12. CALTEX ANJAR, Այնճար
 13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
 14. ԱՅՏՀԻԼ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագա»ի կից
 15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիւն Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:
Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- ԳԱՀԻՐԷ.- Ֆրանսա 48,75 միլիոն եւրօ յատկացուց Եգիպտոսի, որպէսզի բարելաւէ եւ արդիականացնէ երկրին գետնուղիները, յայտնեցին ֆրանսացի եւ եգիպտացի պաշտօնատարներ, Երեքշաբթի օր:
- ՊԷՃՅԻՆԿ.- Չինաստանի Հէյպէյ նահանգին մէջ գտնուող շարժապատկերի սրահի մը մէջ հրդեհ մը ծագած է եւ պատճառած 17 վտի:
- ԿՐԸՆՈՂԼ.- Ֆրանսայի մէջ չմշկելու յատկացուած բլուրի մը վրայ ուղղաթիւ մը քախքախքուեցաւ պատճառելով չորս վտի, յայտնեց ոստիկանութիւնը, Երեքշաբթի օր: Արկածին պատճառը տակաւին չէ յստակացած:
- ՄՍՏՐԻՏ.- Իտալիոյ մէջ շուրջ հալար երկրագործներ նախապէս օր բողոքի ցուցեր կատարեցին ոստիկանութեան դէմ: Յոյժի ընթացքին տեղի ունեցած բախումներուն վերջ տալու համար ոստիկանութիւնը ձգարեց փամփուշտներ արձակելով վիրատուրելով 12 քաղաքայիններ, յայտնեց տեղական մամուլը: Երկրագործները բողոքեցին կառավարութեան դէմ, որովհետեւ անիկա արգիլած է բանակի ցանքը:

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱԼ ԶՐԻՕՐԵՆ
ԱՐԺԷՔԱՒՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ

ԱՊՀԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏ

27 Փետրուարին Ս. Փետրուարի մէջ տեղի պիտի ունենայ ԱՊՀԻ երկիրներու պաշտպանութեան նախարարներու խորհուրդին նիստը՝ Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգեյ Իվանովի նախագահութեամբ:

Նիստին պիտի քննարկուին ԱՊՀԻ պետութիւններու զինուորական եւ թեթիւ զինուորական ճակատները:

Հանդիպման պիտի քննարկուի ուժ հարց, որոնք կը վերաբերին ազգային անվտանգութեան շրջանային համակարգի մեղմումը եւ ֆինանսաւարձման, ինչպէս նաեւ՝ համագործակցութեան համար միացեալ իրաւական հիմքի ստեղծման: Այս քննարկման արդիւնքներուն հիման վրայ պիտի ստորագրուի համաձայնագիր մը՝ տեղեկութիւններու փոխանակման մասին:

Ա. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Կ'ԸՆԴՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՍՈՒՐԻՈՅ ԳԵՍՊԱՆԸ

15 Փետրուարին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան ընդունեց Հայաստանի մէջ Սուրիոյ դեսպան Համէտ Հասանը, որ կ'աւարտէ իր պաշտօնավարութեան շրջանը:

Ա. Մարգարեան յաջողութիւն մաղթած է դեսպանին՝ անոր հետագայ աշխատանքներուն համար, յոյս յայտնելով, որ նոր դեսպանը կը շարունակէ այն համագործակցութիւնը, որ մինչեւ հիմա եղած է Հայաստանի իշխանութիւններուն եւ Սուրիոյ դիւանագիտական ներկայացուցչութեան միջեւ:

Ըստ վարչապետին, հայ - սուրիական միջկառավարական յանձնարարութեան աշխատանքներուն աշխուժացումով կարելի պիտի ըլլայ աւելի մեծ արդիւնքներ ունենալ տնտեսական գործակցութեան մարզին մէջ:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ

Կ'ԸՆԴՈՒՆԻ

ԽԸՐԽԸԶԻՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Հայաստանի մէջ խորհրդատուներու նշանակման դեսպան Քեմէլպէք Նանասե 16 Փետրուարին իր հաւատարմագիրները յանձնեց նախագահ Ռոպէրթ Քոչարեանին:

Հանդիպման ընթացքին քննարկուած են երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններու աշխուժացման կարելիութիւնները, միտքեր փոխանակուած են շրջանային խնդիրներու վերաբերեալ: Նախագահը եւ նոր նշանակուած դեսպանը անդրադարձած են նաեւ նախագահ Քոչարեանի խորհրդատու յառաջիկայ պաշտօնական այցելութեան, որ կը նախատեսուի այս տարուան Ապրիլ ամսուն:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԿԱԳԵՐ

«ՌՈՉ ԵՒ ԱԼԷՔ

ՓԻԼԻՊՈՍ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հարաւային Քալիֆորնիոյ «Ռոպ եւ Ալէք Փիլիպոս» Ազգային վարժարանի աշակերտները մասնակցած են հարաւային Քալիֆորնիոյ սեփական դպրոցներու «Աքա-տեմիք Տիքէթլըն» մրցաշարքին եւ գրաւած են իրենց խմբաւորումին (Ք.) առաջին դիմաց, իսկ ընդհանուր դասուորման երրորդ տեղը:

Վարժարանը 1997էն ի վեր կը մասնակցէր այս մրցումին: Այս տարի «Ալէք Փիլիպոս»-ը կը ներկայացնէին 9 աշակերտներ: Անոնք մրցած են 10 տարբեր մարզերու մէջ, ինչպէս՝ ռեբանայի ներկայացում, հարցազրոյց, արուեստ, երաժշտութիւն, տնտեսագիտութիւն, լեզու եւ գրականութիւն, շարժարձութիւն եւ գարգացման մրցում: Աշակերտները տիրացան 46 մետալներու՝ 20 ոսկի, 14 արծաթ եւ 12 պրոնզ:

«Ռոպ եւ Ալէք Փիլիպոս» վարժարանի տնօրէն Վիդալ Եագոպեան ըսած է, թէ դպրոցին կողմէ մասնակցող աշակերտները տարուէ տարի յաւելեալ նուաճումներ կ'արձանագրեն. անակցուած է, թէ աշակերտները յաւելան:

ԱՊՀԻ

ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

ԱՊՀԻ գործադիր կոմիտէի առաջին փոխնախագահ Տմիթրի Պուլախով լրագրողներուն հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին ըսած է, թէ Մարտի սկիզբը Ալմա Աթայի մէջ կայանալիք ԱՊՀԻ երկիրներու ոչ պաշտօնական վեհաժողով պաշտօնական օրակարգ պիտի չունենայ:

Ան նշած է, թէ ազատ զրոյցի ընթացքին երկիրներու դեկլարները առիթ պիտի ունենան ներկայացնելու իրենց երկիրներուն հրատապ հարցերը, որոնք կը վերաբերին յանցագործութեան, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներուն մէջ տեղի ունեցած ահաբեկչութեան ետք ԱՊՀԻ երկիրներու ռազմավարական գործակցութեան խնդիրներուն:

ԱՐՏԱԳԱՐՑ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԿԱԳԵՐՈՒ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԹԻՒԵՐԸ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան հիւպատոսական ռաժանմունքը 2001 թուականին ստացած է ժամանակաւոր վիզայի 28 հազար 933 դիմում:

Ըստ դեսպանատան, այս տարուան 1 Յունուարէն մինչեւ 13 Փետրուար ստացուած է 1832 վիզայի դիմում: Դիմումներու թիւի նուազում նկատուած է մասնաւորապէս 2001 թուականի Օգոստոսին:

Դեսպանատան հիւպատոսական ռաժանմունքին տուեալներով, անցեալ տարուան ընթացքին յատկացուած է 132 ուսանողական վիզա, անկէ զատ, փոխանակման տարբեր ծրագիրներով վիզա տրամադրուած է 963 քաղաքացիի եւս: Թէ այսօր անոնցմէ քանի՞ հոգի Հայաստան վերադարձած է, տուեալներ չկան:

ԴԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ ԿԸ ՅԱՆՁՆԷ ԻՐ ՀԱՒԱՏԱՐՄԱԳԻՐՆԵՐԸ

12 Փետրուարին Հայաստանի նախագահին իր հաւատարմագիրները յանձնած է Հայաստանի մէջ Դանիոյ թագաւորութեան նոր նշանակուած դեսպան Մարթին Քոֆուրի (նստավայրը՝ Քիել):

Հայաստանի նախագահը եւ նոր նշանակուած դեսպանը արտայայտելով երկու երկիրներու յարաբերութիւնները ընդլայնելու ցանկութիւնը՝ ընդգծած են այդ յարաբերութիւնները գործնական քայլերով ամրապնդելու իրենց պատասխանատուութիւնը:

Նախագահ Ռ. Քոչարեան կարեւոր նկատած է Դանիոյ հետ գործակցութեան զարգացումը թէ՛ երկկողմ մակարդակի վրայ, եւ թէ՛ ընդհանուր եւրոպական քաղաքականութեան շրջագիծին մէջ: Ան վստահութիւն յայտնած է, որ դեսպանին հաւատարմագրումը աւելի աշխուժ շփոթեցնելու կարելիութիւնը կը ստեղծէ եւ անոր անմիջական մասնակցութեամբ նաեւ երկու երկիրներու գործակցութիւնը կը դառնայ աւելի աշխուժ եւ արդիւնաւէտ:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԹԻՒԵՐԸ ԿԸ ՀՐԱ ՊԱՐԱԿՈՒԻՆ

10էն 19 Հոկտեմբեր 2001ին Հայաստանի մէջ տեղի ունեցած մարդահամարի նախնական տուեալներով, տեղեկութիւններ հաւաքուած են 3 միլիոն 458 հազար 303 հոգիի վերաբերեալ:

Ըստ Հայաստանի մարդահամարի վարչութեան մամուլ հարդրակցութեան, բնակչութեան թիւին մասին տուեալները ստացուած են մարդահամարի ժամանակ ցուցակագրուած անձերու ընդհանուր թիւին բացակայող անձերու թիւը (12 միլիոն եւ աւելի) հանելու ճամբով, որուն իրրեւ արդիւնք՝ թիւը եղած է 3 միլիոն 2 հազար 768 հոգի:

Մարդահամարի ժամանակ հաշուառման ենթակայ եղած են տուեալ պահուն Հայաստանի տարածքին գտնուող (մնայուն կամ ժամանակաւորապէս) բոլոր անձերը (Հայաստանի քաղաքացիներ, օտար քաղաքացիներ եւ քաղաքացիութիւն չունեցող անձեր), ինչպէս նաեւ՝ Հայաստանի մէջ մնայուն կերպով բնակող, բայց մարդահամարի ժամանակ մարդահամարէն բացակայողները:

«ԶԱՆՈՒԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆԵՐ ՆԱԽԱԳԻՑ

ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ՝ ԴԺԳՈՂ

15 Փետրուարին Հայաստանի Մամուլի Ազգային Ակումբին կազմակերպութեամբ քննարկուած է «Զանգուածային լրատուական միջոցներու մասին» Հայաստանի արդարադատութեան նախարարութեան մշակած օրէնքին նախագիծը, որ մեծ աղմուկ բարձրացուցած է հայրենի մամուլի էջերուն մէջ: Քննարկումին մասնակցած են գանգրեւոյին լրատուական միջոցներու պատասխանատուներ, Ազգային ժողովի գիտութեան, կրթութեան, մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերու մնայուն յանձնարարութիւնի նախագահ Շաւարշ Քոչարեան եւ Հայաստանի արդարադատութեան փոխ նախարար Աշոտ Արզուման: Լրատուական միջոցներու պատասխանատուները իրենց դժգոհութիւնը յայտնած են օրէնքի նախագիծին կապակցաբար, որ կը փորձէ պաշտօնական գրաքննութիւն հաստատել:

Շ. Քոչարեան նշած է, թէ Եւրոպական խորհուրդը պահանջած է նոր օրէնք դնել այս առնչութեամբ, որովհետեւ 1991 թուականին ընդունուած օրէնքը չի նպաստեր խօսքի ազատութեան: Սակայն, աւելցուած է, որ, ներկայացուած նախագիծը ոչ միայն կը փորձէ խնդրոտել խօսքի ազատութիւնը, այլեւ կը սահմանափակէ լրատուական միջոցներու գործունէութիւնը:

Մամուլի ներկայացուցիչներուն համաձայն, նախագիծը պէտք է հիմնովին փոխել: Անոնք պահանջած են նախագիծը չքննարկել եւ կասեցնել անոր շրջանառութիւնը:

Հանդիպումի աւարտին Մամուլի Ազգային Ակումբի եւ գանգուածային լրատուական միջոցներու պատասխանատուները ստորագրած են յայտարարութիւն մը, որուն մէջ նշած են, թէ օրինագիծը խորթ է ժողովրդավարական համակարգին եւ կը վնասէ Հայաստանի միջազգային վարկին: Անոնք պահանջած են նախագիծին կասեցումը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԴԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏ

15 Փետրուարին տեղի ունեցած է Հայաստանի երիտասարդութեան հարցերու խորհուրդի նիստ, որուն ընթացքին քննարկուած են անցեալ տարուան ընթացքին երիտասարդութեան վերաբերող ծրագիրներու եւ ձեռնարկներու առընչուող հարցերը:

Հանդիպման ընթացքին երիտասարդութեան հարցերու խորհուրդի նախագահ Վահրամ Բարսեղեան ըսած է, թէ բոլոր մարզերուն մէջ տարբեր ծրագիրներու համար նախատեսուած պիւտճեակաւ յատկացուածները արդիւնաւէտ են: Իրականացուած ծրագիրներու շարքին նշուած է «Համահայկական երիտասարդական Միջազգային կեդրոն» հիմնադրամի հիմնումը, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ երիտասարդական կեդրոններու, պետական եւ սեփական համարանիւններու մէջ ուսանողական խորհուրդներու ստեղծումը եւ անոնց աշխատանքները, թափուաշրջութեան նախագահ Լեռնային Ղարաբաղի մէջ կրթութեան նախագահ Լեռնային Ղարաբաղի միջնաբերդի մասնակցութեամբ տարուած աշխատանքները եւ առնուած գործնական հարցեր:

Կարեւոր նկատուած է «Երիտասարդութեան մասին» օրէնքին նախապատրաստութիւնը՝ երիտասարդութիւն - պետութիւն յարաբերութիւնները աւելի լաւ հիմնով պրայ զնելու համար:

Մինչեւ 4 Յունիս վարստանի մէջ կը նախատեսուի կայացնել տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւնները: Այս առընչութեամբ Ախալքալաքի շրջանի Շրջանային վարչութեան նախագահ Լեռնային Ղարաբաղի միջնաբերդի մասնակցութեամբ տարուած աշխատանքները եւ արդիւնաւէտ:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մ. Նահանգներին նիւ ընթացի նահանգի «Կոմիտաս» համալսարանի համահիմնադիր եւ «Հայկական Ֆորում» ամերիկեան ամսագրի համախմբագիր Վինսենթ Լիման օրերս Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի պատմութեան հիմնարկի հիւրն էր: Պատմաբանները նախ մեծ ուշադրութեամբ լսեցին նրա ելույթը «Կոմիտաս» համալսարանի գործունէութեան նպատակներին մասին, ծանօթացան ամերիկեան հասարակական ամպիոններին, որից յետոյ բուռն բանավեճ սկսուեց հայագիտութեան լծացման ու մեկուսացման խնդիրներին շուրջ: Ներկաներին յուզող ամենազգալիւսը խնդրը, ինչպէս նաեւ պարզեցնելու Հայ Միմոնեանը, հայ ժողովրդի պատմութիւնը կեդրոնէր ամերիկեան որոշ հայագէտների ազգայնագործունէութիւնն է, որն անընդունելի եւ դատապարտելի է: Ո՛ւմ համար է այդ հայագիտութիւնը՝ հարցի պատասխանը գիտեն բոլորը, քանզի առկայ է միտումնաւոր քաղաքականութիւն ամերիկեան հասարակութեան մէջ, որին ծառայում են պատմական ճշմարտութիւնը կեղծող «հայագէտները»: Բողոքներ հնչեցին «Հայկական Ֆորում» ամսագրի «սեւ գրաքննութեան» դէմ, որին տարիներ առ յուշուրդուած հայ պատմաբանների գիտական ուսումնասիրութիւնները տեղ չեն գտել ամսագրում: Ներկաներին յուզող ու զայրացնող յաջորդ հարցը հայագիտական ամպիոններում դասաւանդողների ոչ մասնագիտական կրթութիւնն է, բացառութեամբ Քալիֆորնիայի համալսարանի (Լոս Անճելէս) փրոֆ. Ռիչարտ Յովհաննիսեանի, որը յայտնի է ոչ միայն հայագիտական գիտելիքներով, այլեւ՝ ազգանուէր գործունէութեամբ: Հայագիտական նեղ ու մակերեսային գիտելիքներ ունեցող ամերիկեան շատ հայագէտներ, առանց դոկտինչ խորհուրդի հայ պատմագրութեան մէջ, յաճախ «զգայացուցող յայտնագործութիւններ» են անում՝ դժուարին խնդիրներ առաջացնելով հայ պատմաբանների ու զրականագէտների համար: Այսպէս, ամերիկեան մի շարք հայագէտներ հայկական առասպելներին զարմանալիօրէն վերացրում են պարսկական ծագում, կասկածի տակ առնում Մովսէս Խորենացու «գոյութիւնը», յամարուէն շարունակում պնդել հայերի եկուոր լինելը, իսկ Ռոնոյր Սիւնիի հակառակական աշխատութեան մասին նարաւոր չէ լռել...

Պատահական չէ, որ հայագիտական ամպիոնները ժամանակի ընթացքում լուծարուում են, քանզի հայագիտական նեղ գիտելիքներով հնարաւոր չէ բաւարարել ուսանողների պահանջներն ու հետաքրքրութիւնն առաջացնել այս գիտութեան նկատմամբ:

Հայագիտութիւն առանց հայ ժողովրդի պատմութեան, հայ գրականութեան ու լեզուի պատմութեան մասնագէտների... պարզապէս անհեթեթ է հնչում:

Նոյնն է վիճակը նաեւ Երուսաղէմի Հրէական համալսարանի հայագիտութեան ամպիոնում, ուր ուսանողից կամ դոկտորից պահանջուում է ընդամէնը ընաբերել թարգմանել հայերէնից անգլերէն:

Պատմաբանների համոզմամբ, Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան հիմնարկի ու Երեւանի Պետական համալսարանի հայագիտութեան ամպիոնն այսուհետ ուշադրութեան կենտրոնում պահելով վերոյիշեալ խնդիրները՝ անմիջական կապ կը ստեղծեն ամերիկեան հայագիտական ամպիոններին հետ եւ կ'օգնեն նրանց խնդիրները պատմական փաստերն ու կատարելու արժէքաւոր ուսումնասիրութիւններ:

Ռ. Պ.

«Ազգ»

2,5 ՄԻԼԻՈՆ ՀԱՅ՝ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

«Ազատութիւն» ռատիոկայանին տուեալներուն համաձայն, ներկայիս միայն Մոսկուայի մէջ կը բնակի կէս միլիոնէ աւելի հայ, այսինքն, 1989 մարդահամարին համեմատութեամբ այդ թիւը աճած է աւելի քան տասը անգամով: Նման աճ արձանագրուած է նաեւ Վլատիմիրի, Թոլիատի եւ Ռուսիոյ քանի մը որրիչ քաղաքներու մէջ եւս:

Ըստ Նոր Նախիջեանի եւ Ռուսիոյ թեմի թեմական խորհուրդի տուեալներուն, ուսահայերու ամէնէն մեծ խումբերը կը գտնուին Կրասնոտարի (600 հազար) եւ Սիբիրաբրիտի (400 հազար) մէջ:

Թեմական խորհուրդի գնահատմամբ ուսահայ յուշակալները ընդհանուր թիւը ոչ պակաս քան 2,5 միլիոն է: Այդ նոյն տուեալներուն համաձայն, ուսահայ գաղութի շուրջ 2 միլիոննոց աճը ապահովող գլխաւոր բաղադրիչը Հայաստանէն Ռուսիա արտագաղթած հայութեան զանգուածը եղած է:

ԼՈՒՐԵՐ ԶԱԻԱԽԵԼՆ

ՎՐԱՍԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՌԱՎԱՐՍԱՆ ՍԱՐՍԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՐՅԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄ՝ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԼՈՒԱՋ

Ընտրութիւնները պարզելու բաւական խնդիրներ ունի:

